13 մարտի 2020թ.

Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն Ու Մ

Հարգելի Հայտատուներ,

Ի պատասխան **№ UGS-01 «5 ինքնավար արևային ֆոտովոլտային էլեկտրակայաններ ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի համար»** մրցույթի վերաբերյալ 11.03.2020թ. ժամը 18:23 և 12.03.2020թ. ժամը 16:08 procurement@atdf.am էլ.փոստի հասցեով ստացված հարցումներին ներկայացնում ենք հետևյալ պարզաբանումները.

Հարց 1.

- «Մատակարարը իր հայտում պետք է ներկայացնի պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկանք, որը պետք է լինի թողարկված ոչ ուշ քան 15 օր՝ մինչ հայտերի ներկայացման վերջնաժամկետը,
- Մատակարարը պետք է տրամադրի համապատասխան փաստաթուղթ, որը վկայում է ֆինանսական կայուն կարգավիճակի մասին:»

Մեզ հետաքրքրում եմ ԿՈՆԿՐԵՏ ինչ փաստաթղթերի մասին է խոսքը և ինչ ձևով պետք է ներկայացվեն:

Պատասխան՝

- Պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկանքը ենթադրում է հարկային մարմնի կողմից թողարկված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափի ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ տեղեկանք (թղթային տարբերակով ստացած բնօրինակի սկանավորված էլեկտրոնային պատճեն կամ հարկային մարմնի կայքից ներբեռնված և էլեկտրոնային ստորագրությամբ կնքված),
- ֆինանսական կայուն կարգավիճակի մասին վկայությունը ենթադրում է, որ Հայտատուն պետք է ներկայացնի ֆինանսական վիճակի մասին հաշվետվություններ (շահութահարկի հաշվարկներ կամ աուդիտորական հաշվետվություններ):

Հարց 2. Մատակարարման պայմաններ փաստաթղթում, կ. 5-ով ներկայացված պահանջը արդյոք կիրառելի է թե ոչ՝

«5. Ապահովագրություն: Պայմանագրով մատակարարվող ապրանքները պետք է ապահովագրվեն ազատ փոխարկելի տարադրամով պատահական վնասվածքներից՝ արտադրության կամ ձեռք բերման, տեղափոխման, պահեստավորման և մատակարարման ընթացքում: Ապահովագրումը պետք է հավասար լինի ապրանքների ընդհանուր արժեքի 110 տոկոսին «Պահեստից Պահեստ» «Բոլոր Ռիսկերի» հիմքով, ներառյալ «Պատերազմի ռիսկը»: Մատակարարը պետք է կազմակերպի և վճարի բեռնափոխադրման ապահովագրությունը, Գնորդին անվանելով որպես շահառու:»

Պատասխան՝ Մատակարարի կողմից ապրանքների ապահովագրությունը պարտադիր չէ տվյալ մրցույթի շրջանակներում և դրա կիրառումը թողնված է Մատակարարի հայեցողությանը, քանի որ Գնորդը ընդունելու և վճարելու է վերջնական տեղադրված և փորձարկված ապրանքի դիմաց: